Ե .

Սատանան ետես զԱդամ, ի դրախտին դուռն էր նա կանգնած.
Զերկու ձեռքն յիրար իզարկ ու բարկ բարկ յինքըն ծիծաղաց.
Ադամ զայս պատասխանեաց՝ Ի՞նչ տեսար, քու փառքդ անիծած.
Թէպէտ դրախտէն հանեցիր, չիթողու իմ Տէրն ի ձեռաց:

Զ .

Սատանան տեսաւ զՄովսէս, արգելեց եւ շատ մի իլաց:
Իմ Աստուածախօ՛ս Մովսէս, մեր Տէրն է՞ր է մեզ խըռոված.
Երբ մեք աշակերտ էաք Աստուծոյ, Ադամ չէր ստեղծած.
ՁԱդամ ի հողուն ստեղծած, մեք ի փառացն եմք զըրկած:

Է .

Եկին աւետիս բերին Ադամայ թէ՝ Նիստ ու խընդա՛,
Եդեմ դըրախտէն ելար, պատճառ ո՞վ եղաւ, մէկ ասա՛.
Թէ զօձն ու զԵւա կ՚ասեն, նա պատճառ եղաւ Սատանայ,
Ես քեզ Սատանայ եղայ, ինծի ո՞վ եղաւ՝ մէկ ասա՛:

Ը .

Մեր Տէրն ի յերկնից ի վար սիրտ ելաւ թէ՝ «Գա՛մ Սա՛տանայ,
Առնում զԱդամայ հոգին ու գըրեմ ի թըղթին վըրայ,
Ըզծնունդն ալ ի հետ հանեմ, ազատեմ ի հետ Ադամայ,
Ըզդժոխն ալ աւար առնեմ, թէ հազար շինես, Սա՛տանայ:

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ
ԵՐԳ ՊԼՈՒՁ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ

Ա .

Երկուս ի մէկտեղ բերած զերդ ընկեր կ՚ասեն թէ պահէ՛.
Ու չորս բընութիւնս օտար հետ իրաց կ՚ասեն թէ սազէ՛.
Հինգ դուռն է ի բաց թողած, զայդ ամուր կ՚ասեն թէ փակէ՛,
Զիս հոգս ի յայսոց միջին զերդ կըրակ ըզմոմ կու հալէ:

Բ .

Զերկուս ընկեր ո՞նց պահեմ, մէկըս հող մէկըս հոգի է.
Հոգիս թէ ի վեր քարշէ, հողըս ծանր ի վայր կու հակէ.
Վախեմ թէ հողոյս լըսեմ, նա հոգոյս յոյսըն պակասէ.